

« յիշատակ է խաղտետրս ձեռօքն Ստամպոլցի Մինաս երիցու ի դուռն սբ Յակոբայ, ի սբ քաղաքն յերուսաղէմ, ի հայրապետութեան տէր Գրիգոր սրբակրօն հայրապետին, տէր Ած զինքն երկայնաւորս արասցէ ամէն: Եւ դուք հայրք երաժիշտք վարպետք յորժամ քաղցրածայնէք զտետրս, զվերոյգրեալ զտէր Մինասն յիշեցէք ի յաղօթս ձեր. տէր Ած զձեր մեղքն թողու, ամէն: Թիւ ՌՂԳ (=1644) սեպ» իղ. օրն գշի.» (Խապ. Յոյց.):

ՄԻՐԱՔ ԲԱՂԻՇԵՑԻ ԵՒ ՆԱՀԱՏԱԿԵԱԼ ԸՆԿԵՐՆԵՐԸ. — Ս. Փրկչի վանքին Սիոնի գերեզմանատան մէջ կը գտնուի տապանաքար մը, հետեւեալ բովանդակութեամբ. «Այս է տապան Բաղիշեցի Մահնեսի Միրաքի. և Տիարպիլիցի մահնեսի կարապետի և Շաւցի ժաւկոյի ուրք նահատակեցան ի յայս տեղի ի թվին ՌՃԿԳ» (=1714): Այս նահատակութեան գէպքին մանրամասնութիւնները տեսնել (Գրիգոր աք. էջ 69):

ՄԻՔԱՅԷԼ ԱՔ. ԲԱՂԻՇԵՑԻ. — Մբ. աշկ. Դաւիթ Մէրտինցի պտրքի (ՄԶ. Թ. 482). 1608 ին Հալէպ կը գտնուի:

ՄԻՔԱՅԷԼ ԵՐԷՑ ԽԱՐԲԵՐԴՅԻ. — (1706—1707). Իբր տեղապահ Աւետիք պտրքի կը բազմի Պոլսի պատրիարքական Աթոռը ու կը վարէ նաև Ս. Յակոբի վանքին գործերը:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑ, ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆՑԻ. — (1830—1866). 1861 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. ճանապարհորդած է նաև Եւրոպա, Հնդկաստան և Զմիւռնիա. իր այս ճամբորդութեան նպատակի մասին տեսնել Հիւսիսախալ թերթը (1859. էջ 379-404): Իսկ իր գրական գործերու մասին տեսնել (Բնար, էջ 571): 1866 ին իր տարապրութեան պատճառաւ կանխահաս մահ մը ունեցած է և թաղուած է Նոր Նախիջեւանի Հայոց Ս. Խաչի վանքը ու 1904 ին անոր գերեզմանին վրայ կառուցուած է իր արձանը: Իր ընդարձակ կենսագրութեան համար (տե՛ս Եր. Շահազիզի յոգուածները, Լոււնայ, 1903, 1904):

ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ԴԱԽԹԵԱՆ, ՏՓԽԻՍԵՑԻ. — Մբ. Ծ. 1860 ին. Զո. 1889 ին. ՏՓ. (1892-1894). միաբանութենէ կը հրաժարի և կը մեկնի հայրենիք 1897 ին եւ կը միաբանակցի Ս. Էջմիածնի վանքին: